# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1

ք. Երևան «09» հուլիսի 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն ի դեմս գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վահե Սարգսյանի, որը գործում է ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի N 2 հավելված սահմանված Օրացուցային գրաֆիկի ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4 355 000 (չորս միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից 725 833 (յոթ հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարություն | «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8 | ք. Երևան, Բագրատունյաց 69 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության Գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ФԲԸ |
| Հ/Հ՝ 900011021921 | Հ/Հ 1570071096790100 |
| ՀՎՀՀ՝ 02506264 | ՀՎՀՀ 02818636 |
| ---------------------- /ստորագրություն/ Կ.Տ. | ---------------------- Վ. Յու. Սարգսյան (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
09 *հունիսի 2021թ. կնքած*
*ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ - 21/23-1 ծածկագրով պայմանագրի*

# Ծավալաթերթ - Նախահաշիվ

ՇԵՆՔԵՐԻ,ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (ՀԱՄԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿ

## Գլուխ 1

*Գնման ենթակա աշխատանքների /առանց նյութերի/ գնացուցակը*

| № | | | Աշխատանքի անվանումը | Չ/Մ | Ծավալը | Միավորի արժեքը (հազար ՀՀ դրամ) | Ընդամենը (հազար ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **Գնման ենթակա աշխատանքների անվանումները** | | | | | | | |
| 1 | | Կ46-79 | Քարե պատերի քանդում | $մ^3$ | 4,00 | 2,90 | 11,60 |
| 2 | | Կ46-124 կիրառ | Դռների, բացվածքների փայտյա, մետաղապլաստե, ալյումինե լրացումների ապամոնտաժում | $մ^2$ | 10,00 | 1,10 | 11,00 |
| 3 | | 13-5 կիրառ | Հատակների և պատերի կերամիկական սալիկների երեսապատման քանդում | $մ^2$ | 66,00 | 0,57 | 37,62 |
| 4 | | Կ46-35 | Սվաղի հեռացում քարե պատերից և առաստաղներից | $մ^2$ | 66,00 | 0,55 | 36,30 |
| 5 | | 23-77 23-226 գն.3 | Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 1կմ | տ | 3,00 | 2,90 | 8,70 |
| 6 | | գն.3 | Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի տեղափոխում, մինչև 1կմ | տ | 3,00 | 3,50 | 10,50 |
| 7 | | Կ15-275-1 | Պատերի մակերևույթների համատարած հարթեցում (մեկշերտանի սվաղ) /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 0,72տ/ | $մ^2$ | 20,00 | 0,75 | 15,00 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | | Կ15-242-1 | Պատերի, սյուների և որմնասյուների հասարակ սվաղ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 2,17տ/ | մ² | 20,00 | 1,25 | 25,00 |
| 9 | | Կ15-277-1 | Պատուհանների և դռների տափակ շեպությունների սվաղ գաջով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 3,07տ/ | մ² | 9,00 | 2,07 | 18,63 |
| 10 | | Կ15-661 | Առաստաղների բարելավված ներկում ջրաէմուլսիոն; լատեքսային, ճակատային ներկով սվաղի վրայով /առանց նյութերի արժեքի; ծախսը ներկ 36կգ; ծեփամածիկ 55կգ/ | մ² | 125,00 | 0,60 | 75,00 |
| 11 | | Կ15-662 | Պատերի բարելավված ներկում ջրաէմուլսիոն; լատեքսային, ճակատային ներկով ներկման համար պատրաստված կառուցատարրերի վրայով | մ² | 450,00 | 0,30 | 135,00 |
| 12 | Շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ (Համաշինարարական աշխատանքներ) | Կ17-61 | Զուգարանակոնքի տեղադրում, վրան տեղադրվող ողողման բաքով /առանց զուգարանակոնքի, ողողման բաքի և նյութերի արժեքի/ | հատ | 4,00 | 3,50 | 14,00 |
| 13 | | Կ17-19 | Լվացարանների տեղադրում սառը ջրի միացումով /առանց սարքերի և նյութերի արժեքի/ | հատ | 3,00 | 2,40 | 7,20 |
| 14 | | Կ17-28 | Լվացարանների տեղադրում սառը և տաք ջրի միացումով /առանց սարքերի և նյութերի արժեքի/ | հատ | 4,00 | 3,00 | 12,00 |
| 15 | | Կ16-33 | Φ50մմ կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների մոնտաժում, ամրակապումով և փորձարկումով /առանց խողովակների և ամրակապերի (14կգ) արժեքի/ | մ | 25,00 | 0,75 | 18,75 |
| 16 | | Կ16-34 q=1,2 կիրառ | Φ160մմ կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների մոնտաժում, ամրակապումով և փորձարկումով /առանց խողովակների և ամրակապերի (28,2կգ) արժեքի/ | մ | 20,00 | 0,85 | 17,00 |
| 17 | | 19-2 q=1,2 կիրառ | Պողպատե մինչև Φ100մմ խողովակաշարերի ապամոնտաժում | մ | 25,00 | 0,50 | 12,50 |
| 18 | | 19-55 | Թուջե կոյուղու մինչև Φ200մմ խողովակաշարերի կազմաքանդում /ապամոնտաժում/ | մ | 20,00 | 1,25 | 25,00 |
| 19 | | 19-69 | Լվացարանների ապամոնտաժում /առանց ծորակների, փականների և ծծափողերի/ | հատ | 3,00 | 0,50 | 1,50 |
| 20 | | 19-70 | Զուգարանակոնքերի, հատակադիր թասերի և միզամանների ապամոնտաժում /առանց ծորակների, փականների, ծծափողերի և ջրթափ բաքիկների/ | հատ | 3,00 | 0,70 | 2,10 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | | 19-75 | Ծծափողերի/սիֆոն/, ծալքավոր կցախողովակների ապամոնտաժում | հատ | 3,00 | 0,75 | 2,25 |
| 22 | | 19-102 գ=0,8 կիրառ | Ծծափողերի/սիֆոն/, ծալքավոր կցախողովակների մոնտաժում /առանց նյութի արժեքի/ | հատ | 3,00 | 1,10 | 3,30 |
| 23 | | 19-22 | Ծորակների, ծորակ-խառնիչների փոխարինում, Փ15;20մմ /առանց նյութերի արժեքի/ | հատ | 3,00 | 0,50 | 1,50 |
| 24 | | 10-975-8 գ=0,3 | Վարդակների, անջատիչների տուփերի տեղադրում, պատրաստի խորշերում /առանց տուփի արժեքի/ | հատ | 20,00 | 0,30 | 6,00 |
| 25 | | 10-975-8 | Էլ. լուսավորության բաժանման տուփերի տեղադրում, պատրաստի խորշերում /առանց տուփի արժեքի/ | հատ | 10,00 | 0,90 | 9,00 |
| 26 | | 8-599-1 | Լուսատուներ տեղադրում, լամպերի քանակը մինչև 2 /առանց արժեքի/ | հատ | 22,00 | 2,10 | 46,20 |
| Ընդամենը աշխատանքներ (գլուխ 1), ներառյալ ԱԱՀ | | | | | | | 562,65 |

## Գլուխ 2

**Շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվող նյութերի (շինանյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների) գնացուցակ**

| № | Հիմնավորում | Շինանյութի | Չափման միավորը | Տեխնիկական հատկանիշները | Միավորի գինը ներառյալ ԱԱՀ-ն (հազար ՀՀ դրամով) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ ՓԱՅՏԻՑ** | | | | | |
| **Շրիշակ տարբեր տիպի և չափսի** | | | | | |
| 1 | իտ | Շրիշակ | 150 գծմ | պլաստիկ, 70x2200մմ | 127,50 |
| **Լամինատե հատակ տարբեր տիպի և չափսի** | | | | | |
| 1 | իտ | Հատակ | 100 մ² | Լամինատե, 7մմ հաստ. (շրիշակով, սպունգով) | 500,00 |
| **ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ ԵՎ ԿՑԱՄԱՍԵՐ** | | | | | |
| **Պողպատե խողովակ տարբեր կտրվածքի և չափսի** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | իտ | Խողովակ | 25 գծմ | Պողպատե, 50x50x2մմ | 10,00 |
| **ՌՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ ԵՎ ԿՑԱՄԱՍԵՐ** | | | | | |
| **Մետաղապլաստե խողովակ տարբեր չափսի** | | | | | |
| 1 | իտ | Խողովակ | 30 գծմ | Մետաղապլաստե, d=20 մմ, նախատեսված սառը ջրի համար | 10,26 |
| 2 | իտ | Խողովակ | 30 գծմ | Մետաղապլաստե, d=20 մմ, նախատեսված սառը ջրի համար | 14,70 |
| **Պոլիվինիլքլորիդե խողովակ կոյուղու համար տարբեր չափսի** | | | | | |
| 1 | իտ | Խողովակ | 30 գծմ | Պոլիվինիլքլորիդե, կոյուղու համար, d=110մմ, պատի հաստ. 2մմ; L=2000մմ | 21,70 |
| **Մետաղապլաստե դուռ տարբեր տիպի, գույնի և չափսի** | | | | | |
| 1 | իտ | Դուռ | 15 մ² | Մետաղապլաստե, բլոկով, կաղնեգույն, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ | 750,00 |
| **Գնդիկավոր փական տարբեր տեսակի և չափսի** | | | | | |
| 1 | իտ | Փական | 5 հատ | Գնդիկավոր, 1" F | 22,50 |
| **Պոլիվինիլքլորիդե խողովակի կցամաս տարբեր տիպի և չափսի** | | | | | |
| 1 | իտ | Կցամաս | 10 հատ | Պոլիվինիլքլորիդե, d=110մմ (կոյուղու համար) | 7,00 |
| 2 | իտ | Անկյունակ | 10 հատ | Պոլիպրոպիլեն, d=110մմ-90$^0$ (կոյուղու համար) | 4,10 |
| 3 | իտ | Եռաբաշխիչ | 5 հատ | Պոլիպրոպիլեն, d=110մմ-45$^0$ (կոյուղու համար) | 3,90 |
| 4 | իտ | Եռաբաշխիչ | 5 հատ | Պոլիպրոպիլեն, d=110մմ-90$^0$ (կոյուղու համար) | 3,70 |
| 5 | իտ | Խաչուկ | 5 հատ | Պոլիպրոպիլեն, d=110մմ-45$^0$ (կոյուղու համար) | 11,50 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | իտ | Խաչուկ | 5 հատ | Պոլիպրոպիլեն, d=110x50x110x50մմ-45⁰ (կոյուղու համար) | 7,50 |
| 7 | իտ | Խաչուկ | 5 հատ | Պոլիպրոպիլեն, d=110մմ-90⁰ (կոյուղու համար) | 9,00 |
| 8 | իտ | Խցան | 2 հատ | Պոլիվինիլքլորիդե, d=110մմ (կոյուղու համար) | 1,00 |
| ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | | | | | |
| 1 | իտ | Օդամղիչ | 2 հատ | Պատուհանի, 230/9" PLLS, 35 Вт, 700մ³/ժ | 162,00 |
| ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՅՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | | | | | |
| Ջեռուցման կաթսայի սարքավորումներ | | | | | |
| 1 | իտ | Կաթսայի պոմպ | 2 հատ | Տաք ջուր | 236,00 |
| Զուգարանակոնք տարբեր տեսակի | | | | | |
| 1 | իտ | Զուգարանակոնք | 3 հատ | | 90,00 |
| 2 | իտ | Ծորակ | 4 հատ | | 24,00 |
| Սողնակ բրոնզե տարբեր տիպի և չափսի | | | | | |
| 1 | իտ | Սիֆոն | 7 հատ | Պլաստմասից, d=50մմ | 8,40 |
| Պղնձե հաղորդալար տարբեր տիպի և չափսի | | | | | |
| 1 | իտ | Հաղորդալար | 25 գծմ | Պղնձե, ППВГ, 2x2.5մմ² | 7,50 |
| 2 | իտ | Հաղորդալար | 25 գծմ | Պղնձե, ППВГ, 2x4մմ² | 11,50 |
| 3 | իտ | Հաղորդալար | 100 գծմ | Պղնձե, ППВГ, 2x6մմ² | 70,00 |
| Անջատիչ տարբեր տեսակի | | | | | |
| 1 | իտ | Անջատիչ | 10 հատ | Առանց լուսանշանի, միտեղանի | 7,00 |
| 2 | իտ | Անջատիչ | 10 հատ | Երկտեղանի | 13,00 |
| Վարդակ տարբեր տեսակի | | | | | |
| 1 | իտ | Վարդակ | 20 հատ | Հողանցման կոնտակտով և կափարիչով, փակ տեղադրման | 30,00 |
| Մալուխի սակառ (короб) տարբեր տիպի և չափսի | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | հտ | Սակառ | 10 հատ | Մալուխի, 16x16մմ, L=2000մմ (короб) | 2,25 |
| 2 | հտ | Սակառ | 10 հատ | Մալուխի, 20x20մմ, L=2000մմ (короб) | 4,10 |
| 3 | հտ | Սակառ | 10 հատ | Մալուխի, 30x30մմ, L=2000մմ (короб) | 5,75 |
| 4 | հտ | Սակառ | 10 հատ | Մալուխի, 40x40մմ, L=2000մմ (короб) | 8,75 |
| **Տուփ էլեկտրամոնտաժային տարբեր տիպի և չափսի** | | | | | |
| 1 | հտ | Տուփ | 10 հատ | Էլ.մոնտաժային, K-820-2 | 2,55 |
| **Միաֆազ ավտոմատ անջատիչ տարբեր տիպի և հզորության** | | | | | |
| 1 | հտ | Անջատիչ | 3 հատ | BA 47-29 1P 63Ա | 4,10 |
| **Եռաֆազ ավտոմատ անջատիչ տարբեր տիպի և հզորության** | | | | | |
| 1 | հտ | Անջատիչ | 1 հատ | BA 47-29 3P 100Ա | 7,50 |
| **Ներկ լատեքսային տարբեր տեսակի** | | | | | |
| 1 | հտ | Ներկ | 200 լ | Լատեքսային, [illegible] 3 15լ (18կգ) | 380,00 |
| **Ծեփամածիկ տարբեր տեսակի** | | | | | |
| 1 | հտ | Ծեփամածիկ | 500 կգ | Ներքին աշխատանքների P1 (30 կգ) | 120,00 |
| 2 | հտ | Ծեփամածիկ | 150 կգ | Գիպսային, ABC P2 (30 կգ) | 21,00 |
| 3 | հտ | Ծեփամածիկ | 100 կգ | Կավճային Ֆինիշ (30 կգ) | 21,00 |
| 4 | հտ | Ծեփամածիկ | 60 կգ | ՄԱՍՏԵՐ (25 կգ) | 21,00 |
| 5 | հտ | Ծեփամածիկ | 120 լ | [illegible] աշխատանքների համար: Ծախսը՝ 0.1-0.2 լ/մ2 Ceresit CT-17 | 133,00 |
| **Գունանյութ և լուծիչ տարբեր տեսակի** | | | | | |
| 1 | հտ | Գունանյութ | 30 հատ | 0.75 լ | 45,00 |
| 2 | հտ | Գունանյութ | 30 հատ | КОЛЕР ПАСТА, ՕՊՏԻԼՅՈՒՔՍ, ջրադիսպերսիոն և յուղաներկերի համար, 0.1 լ | 15,00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | իտ | Լուծիչ | 10 հատ | Ուայտ-սպիրիտ 0.5 լ | 7,00 |
| Հատակի սալիկ տարբեր տեսակի և չափսի | | | | | |
| 1 | իտ | Սալիկ | 50մ² | Հատակի, կերամիկական 500x500մմ | 255,59 |
| 2 | իտ | Սալիկ | 50մ² | Պրեսգրանիտե, 400x400մմ | 420,00 |
| Կախովի պլաստմասե և գիպսակարդոնե առաստաղ և պրոֆիլ տարբեր գույնի, տիպի և չափսի | | | | | |
| 1 | իտ | Առաստաղ | 50մ² | Պլաստմասե կոմպլեկտ իր կցամասերով՝ 595x595x7մմ | 90,00 |
| 2 | իտ | Առաստաղ | 50մ² | Գիպսակարդոնե կոմպլեկտ իր կցամասերով 220 x 111մմ | 65,00 |
| Ընդամենը աշխատանքներ (գլուխ 2), ներառյալ ԱԱՀ | | | | | 3792,35 |
| **Ընդհանուրը (գլուխ 1 և գլուխ 2 միասին), ներառյալ ԱԱՀ** | | | | | **4355,00** |

**«Պատվիրատու»**
ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ Ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011021921
ՀՎՀՀ՝ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ

**«Կապալառու»**
«Արմինժ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրատունյաց 69
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570071096790100
ՀՎՀՀ՝ 02818636

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 09 » 07 2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կատարման | | | |
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ենթակա քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 45461100/2 | Շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքներ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների և օգտագործվող շինարարական նյութերի գնացուցակները ներկայացված են հավելված 1-ում: Կատարողը շինարարական աշխատանքներն իրականացնում է սեփական միջոցներով՝ մեքենա -մեխանիզմներով, բանվորական ուժով, ինչպես նաև վերանորոգումներ և հարդարումներ իրականացնելու համար զանազան շինարարական իր գործիքներով:<br>• Կատարողը պետք է ունենա ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված համապատասխան լիցենզիաներ: | դրամ | 4 355 000 | 1 | ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 23 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում |
| | | | Գնային առաջարկը ներկայացված են հավելված 1.1-ում նշված աշխատանքների և օգտագործվող նյութերի միավոր գների ընդհանուր արժեքով (գլուխ 1-ը և գլուխ 2-ը միասին): | | | | | |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 23:

*Հավելված թիվ 2*
*« 09 » 07 2021 թ. կնքված*
*ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1 ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

**ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքներ | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը | 30 օրացուցային օրվա ընթացքում |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը** | **30 օրացուցային օրվա ընթացքում** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ Ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011021921
ՀՎՀՀ՝ 02506264

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրատունյաց 69
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570071096790100
ՀՎՀՀ 02818636

--------------------- Վ. Յու. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 3*
*« 09 » 07 2021թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/2 | **Շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքներ** | - | - | - | - | - | - | 2 917 850 | 2 917 850 | 2 917 850 | 4 355 000 | 4 355 000 | 4 355 000 | 4 355 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ Ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011021921
ՀՎՀՀ՝ 02506264

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրատունյաց 69
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570071096790100
ՀՎՀՀ 02818636

--------------- Վ. Յու. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված թիվ 4*
*«        »        2021 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «               » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«        » 2021 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
(Պատվիրատուի անունը) (Կապալառուի անունը)
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________ -ին կնքված N ______________________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն